

նստելոց էր. մինչև կարօտել ծերունւոյ իորն խնդրել օգնութիւն 'ի Լեւոնէ՝ երբեմն ոտխէ իւրոյ. իսկ սա՝ զի քան զնորայն՝ զիւրն եւ զեղբօր թոռինն առաւել դիտէր զշահ օգտի, փութացաւ ձեռն ետ, հալածեաց զապառուս ծնունդն, հաստատեաց անդրէն զծնողն յաթոռ իւր, յորում եւ մեռաւ սա յետ սակաւ ամաց (1201). եւ անդէն բացաւ դուռն անվերջ հակառակութեանց ընդ Լեւոն եւ ընդ Պեմունդ Դ, որպէս ցուցցէ յետագայդ կարգ պատմութեան: Իսկ այժմիկ կայ մեզ տեսանել զառտնին գործս Լեւոնի, եւ զ'ի վաղուց երկնեալ խորհուրդ թագաւորելոյն 'ի գլուխ հանել փառօք եւ ճարտարութեամբ:

Բ. Բարեկամութիւն Լեւոնի ընդ իշխանս արեւմտեայս որ յայսկոյս ծովու եւ ընդ Ասպետս, եւ որ յայնկոյս

Մի 'ի խորագէտ հնարից բարգաւաճանաց Լեւոնի՝ էր յանկուցանել յինքն զամենայն աւագ եւ զօրաւոր այր յարեւմտեայց, զմերձաւորս եւ զորս ըստ պատեհի անցանէին ընդ Ասորիս. կամ ինքնին երթալով առ նոսա, կամ զնոսա հրաւիրելով յերկիր իւր, իսկ առ հեռաւորսն՝ թղթովք եւ դեսպանօք բանագնաց լինելով: Տեսաք յառաջագոյն զպատրաստութիւն նորա յընդունել զմեծ կայսրն Փրետրիկ, եւ ապա զորդի նորա. յետոյ զերթալն յողջոյն Հռիկկարդի թագաւորի Անգղիոյ 'ի Կիպրոս, հաւանօրէն եւ Փիլիպպոսի թագաւորի Փռանկաց, կամ 'ի Պտղոմայիս, կամ յիւր իսկ սահմանս երկրին՝ յԱտալիա, ուր նաւեալ ելեալ էր թագաւորն այն. եւ յետոյ զընդունելութիւն Հենրեայ դքսին Շամբանեայ՝ անուանեալ թագաւորին Երուսաղեմի: Ոչ յառաջ քան զբազում ինչ ժամանակս՝ թուի հրաւիրեալ եւ ասպնջականեալ նորա եւ «զընծայեալն թագաւորութեանն Կիպրոսի՝ զԳունդստապլն» Երուսաղեմի՝ զԱմաւրի, որ եւ 'ի նմին ամի յաջորդեաց զեղբայր իւր Կի Լիւզինեան († 13 ապրիլ. 1194) 'ի տէրութեան Կիպրոսի, եւ յետոյ (1198) 'ի թագաւորութիւն Երուսաղեմի, առեալ 'ի կնութիւն զնախայիշեալն Իզապել՝ ժառանգ այնր թագաւորութեան: Պատճառ զալստեան սորա առ Լեւոն՝ ոչ է յայտ, զի ոչ յիշի 'ի պատմչաց Խաչակրաց, այլ միայն մերս Ն. Լամբրունեցի՝ համառօտիւ 'ի թղթին առ Լեւոն, յօժանդակութիւն նորին եկեալ ծանուցանէ, ասելով. «Ի գալն 'ի կարիս ձեր օգնականութեանն՝ առ մեզ, հաճութեամբ եւ զովութեամբ ընկալաւ զմեր բարեկարգութիւն»: Զի՞նչ այն կարիք էին օգնականութեան՝ Լեւոնի, խորհրդեա՞ն թէ պատերազմի, եւ ընդ ո՞ւմ, Անտիոքացո՞յն, Տաճարականա՞ց, թէ